Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3
Հեռ.՝ +374 99 515 600 կայք՝ www.ldpf.am
Էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com

Կարծիք

21.04.2023 թ.-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հանրային քննարկման են դրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և մի շարք այլ օրենքներում լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծեր, որոնցով իրավակարգավորումներ են նախատեսվում օպցիոնի պայմանագրի կնքման բնագավառում:

Կարևորելով օպցիոնի պայմանագրի կնքման կարգավորման նախաձեռնությունը՝ ստորև ներկայացվում են որոշ նկատառումներ քննարկման դրված նախագծերի վերաբերյալ.

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող 445.1 հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ օպցիոնի պայմանագրով պետք է սահմանված լինի պայմանագրի առարկա հանդիսացող պահանջը ներկայացնելու դեպքում մյուս կողմի կողմից այդ պահանջը կատարելու դիմաց օպցիոնի գնորդի կողմից տրամադրվելիք հատուցման չափը և դրա տրամադրման կարգը: Իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե օպցիոնը դադարել է օպցիոնի գործողության ժամկետում դրանով սահմանված պահանջ չներկայացնելու հետևանքով, ապա նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վճարը չի վերադարձվում:

Վերոգրյալ երկու իրավակարգավորման համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսգրքի 445.1 հոդվածի 3-րդ մասը նախատեսում է օպցիոն պարգևավճարի սահմանման պահանջ, այսինքն՝ պայմանագրի կնքման պահին որոշված գնով ապագայում գույք ձեռք բերելու իրավունքի դիմաց հատուցման (պարգևավճարի) վճարման պարտականություն օպցիոնի գնորդի կողմից: Ինչ վերաբերում է խնդրո առարկա հոդվածի 4-րդ մասին, ապա այն սահմանում է համապատասխան գույքի դիմաց նախապես համաձայնեցված գնի վճարման կարգավորումը:

Հաշվի առնելով Նախագծերի ընդունման հիմնավորումը, այդ թվում՝ համապատասխան կարգավորումների նախատեսման արդյունքում ստարտափ ընկերությունների կողմից

որակյալ աշխատուժ ներգրավելու և աշխատողների աշխատանքի արտադրողականությունը խրախուսելու նպատակի իրագործումը, խնդրահարույց է օպցիոնի պայմանագրով պայմանագրի առարկա հանդիսացող պահանջը ներկայացնելու դեպքում մյուս կողմի կողմից այդ պահանջը կատարելու դիմաց օպցիոնի գնորդի կողմից տրամադրվելիք հատուցման չափը և դրա տրամադրման կարգը սահմանելու վերաբերյալ իմպերատիվ պահանջի սահմանումը:

Փաստորեն Նախագիծն ամրագրում է օպցիոն պայմանագրի հատուցելիության պահանջ այն դեպքում, երբ ստարտափ ընկերությունների պարագայում առավել տարածում պետք է ստանա, օրինակ, համապատասխան սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատակցի կողմից օպցիոնի պայմանագրով պահանջի ներկայացման իրավունքի դիմաց ոչ թե որոշակի պարգևավճարի վճարման, այլ գործողության/պարտավորության կատարման պրակտիկան, օրինակ՝ օպցիոնի պայմանագրով որոշակի ժամանակահատված ընկերությունում աշխատելու պայմանի նախատեսման, ընկերության կողմից որոշակի տնտեսական ցուցանիշներին հասնելու պայմանի ապահովման միջոցով: Այս պայմանների վրա հասնելու դեպքում համապատասխան աշխատակցի մոտ կծագի պայմանագրի կնքման պահին որոշված գնով բաժնեմաս ձեռք բերելու իրավունք, որպիսի իրավունքի համար լրացուցիչ պարգևավճարի սահմանման պահանջը չի ծառայի կարգավորմամբ հետապնդվող նպատակին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի լրացվող 445.1-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսել նաև առանց հատուցում (պարգևավճար) տրամադրելու պարտականության՝ սահմանված գնով օպցիոնի պայմանագրի կնքման հնարավորություն և/կամ սահմանված գնով համապատասխան գույք ձեռք բերելու իրավունքի տրամադրում՝ օպցիոնի գնորդի կողմից համապատասխան պարտավորության կատարման դիմաց:

Հարկ է արձանագրել նաև, որ վերոգրյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե օպցիոնը դադարել է օպցիոնի գործողության ժամկետում դրանով սահմանված պահանջ չներկայացնելու հետևանքով, ապա նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված վճարը չի վերադարձվում: Մինչդեռ, 445.1-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպմամբ հատուցման վճարումը փոխկապակցում է ոչ թե օպցիոնի պայմանագրով համապատասխան պահանջի իրավունքի տրամադրման հետ (ենթադրվում է, որ օպցիոնի գնորդը վճարում է համապատասխան իրավունքը ձեռք բերելու համար՝ անկախ նրանից, թե հետագայում կիրացնի այն սահմանված ժամկետում թե ոչ), այլ պահանջը ներկայացնելու դեպքում մյուս կողմի կողմից այդ պահանջը կատարելու հետ, ինչը ոչ միայն հիմնավորված չէ, այլև հակասում է նույն հոդվածի 5-րդ մասի տրամաբանությանը, որից բխում է նախապես արդեն իսկ վճարված հատուցումը (այսինքն՝ գույք ձեռք բերելու իրավունքի դիմաց պարգևավճարը) չվերադարձնելու պայմանը:

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ